ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ
2018 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԲԱԺԻՆ 1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը 4

ԲԱԺԻՆ 2. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 6

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 6

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները..... 8

ԲԱԺԻՆ 3. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները 9

3.1. Հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրություն և շինարարական աշխատանքների գնահատում 9

3.2. Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավում 9

3.3. Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ..... 12

3.4. Հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքեր տեղադրում 14

ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը..... 14

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը..... 14

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 15

Եզրակացություններ..... 17

Հղումներ օգտագործված նյութերին 18

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2019 թվականի աշխատանքային ծրագրի 22-րդ կետի [Որոշում 1] և արտացոլում է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև ընկերություն) 2018 թվականի ներդրումային ծրագրի [Որոշում 2] (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագիրը և փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր միջոցառումներ իրականացնել ընկերությանը պատկանող հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրության ու շինարարական աշխատանքների գնահատման, շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավման, և հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրման նպատակով: Ներդրումներ էր նախատեսվում իրականացնել հիդրոէլեկտրակայանների շահագործման կազմակերպման նպատակով գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերման, ինչպես նաև շինմոնտաժային աշխատանքների իրականացման ենթաուղղությամբ՝ Գորիս քաղաքի գրասենյակի, դրան կից պահեստների և ՀԷԿ-երի պահեստների, «Տաթև ՀԷԿ»-ի շենքի, «Սպանդարյան ՀԷԿ»-ի և «Սպանդարյան» ջրամբարի բարձրացնող մեխանիզմների և գնդային փականի վերականգնման և հիմնանորգման, «Սպանդարյան ՀԷԿ»-ում կամրջակային կռունկի ամրացման աշխատանքների իրականացման ուղղությամբ:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականների ներդրումային ծրագրերով նախատեսված էր իրականացնել 1 680,2[1] մլն դրամի ներդրումներ, որից.

- հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրություն և շինարարական աշխատանքների գնահատում՝ 367,4 մլն դրամ,

[1] Սույն վերլուծական տեղեկանքում բոլոր գումարները ներկայացված են առանց ԱԱՀ:

- շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավվում՝ 556,0 մլն դրամ,
- հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրում՝ 200,9 մլն դրամ:
- շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 556,0 մլն դրամ,

Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ հիմնական ուղղությունների ներկայացված է Գրաֆիկ 1-ում:

Գրաֆիկ 1



ԲԱԺԻՆ 2.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Հաշվետվության՝ ընկերությունը 2018 թվականի ընթացքում իրականացրել է 835,1 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 343,3 մլն դրամի ներդրումներ: Մնացած 491,7 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված և ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2018թ.	2018թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրություն և շինարարական աշխատանքների գնահատում	367,4	-	0%	97,2	160,0	257,1
2	Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավվում	556,0	52,6	9%	262,9	8,9	271,8
3	Հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրում	200,9	-	0%	-	-	
4	Հիդրոէլեկտրակայանների շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	556,0	290,7	52%	292,0	14,2	306,2
	Ընդամենը	1 680,3	343,3	20%	652,0	183,0	835,1

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, ընկերությունը 2018 թվականի ներդրումային ծրագիրը կատարել է 20%-ով:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	183,0	22%	-	-
2	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներ	65,5	8%	65,5	19%
3	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներ	474,6	57%	235,1	68%
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներ	111,9	13%	42,7	12%
4.1	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	69,9	-	42,7	-
4.2	*նախագծային աշխատանքներ*	42,0	-		-
	ԸՆԴԱՄԵՆԸ	835,1		343,3	

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, Ընկերության կողմից 2018 թվականին ավարտված աշխատանքների զգալի մասն իրականացվել է կապալառու կազմակերպությունների կողմից:

ԲԱԺԻՆ 3.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ստորև ներկայացված է ընկերության կողմից 2018 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

3.1 Հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրություն և շինարարական աշխատանքների գնահատում

Հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրության և շինարարական աշխատանքների գնահատման ուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 367,4 մլն դրամ՝ ընկերության բոլոր պատվարների անվտանգության և հիդրոէլեկտրակայանների շենքերի փաստացի վիճակի ուսումնասիրության, նմուշառումների իրականացման և տվյալների հավաքագրման և արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրի կազմման, ինչպես նաև ջրամբարների մշտադիտարկող-հսկող ժամանակակից համակարգի ներդրման նպատակով: Նշված ուղղությամբ իրականացվել են 257,1 մլն դրամ, որոնք մնացել են անավարտ:

3.2 Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավում

Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավման ուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 556,0 մլն դրամ՝ ջրամբարներում ձկնապաշտպան և մաքրող էկրանների, ջրաչափական կետերում չափիչ սարքերի տեղադրման նախագծային աշխատանքների իրականացման, կոյուղաջրերի

մաքրման տեղային կայանների ստեղծման, վտանգավոր թափոնների պահպանման և հեռացման, տրանսֆորմատորային ենթակայանների տեղակայման, ՀԷԿ-երում հրդեհային ազդանշանային համակարգերի տեղադրման և հրդեհաշիջման համակարգերի կառուցման, «Տաթև ՀԷԿ»-ում տրանսֆորմոտորների միջև գոյություն ունեցող պատերի վերակառուցման, բնապահպանական հետազոտությունների, մշտադիտարկումների, աղտոտված միջավայրերի գնահատման, նախագծման և մաքրման աշխատանքների նպատակով:

«Կոյուղաջրերի մաքրման տեղային կայանների ստեղծում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 60,2 մլն դրամ: Հաշվետվության ուսումնասիրության համաձայն այս ուղղությամբ իրականացվել 27,9 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են «Տաթև», «Շամբ» և «Սպանդարյան» ՀԷԿ-երի կոյուղաջրերի մաքրման կայանների նախագծման աշխատանքներին: Նշված աշխատանքները մնացել են անավարտ:

«Բնապահպանական հետազոտություններ, մշտադիտարկումներ, աղտոտված միջավայրերի գնահատման, նախագծման և մաքրման աշխատանքներ» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 118,6 մլն դրամ: Այս ուղղությամբ իրականացվել են 5,1 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են Որոտան գետի ջրավազանի կենսաբազմազանության հետազոտությանը: Նշված աշխատանքները մնացել են անավարտ:

«Վտանգավոր թափոնների պահպանում, հեռացում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 90,6 մլն դրամ: Հաշվետվության համաձայն այս ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 146,2 մլն դրամ ներդրումներ, որոնք հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ անավարտ են: Այս աշխատանքները ներառում են ասբեստ պարունակող նյութերի վնասազերծման, փոխադրման և մշտական պահեստավորման աշխատանքներ:

«ՀԷԿ-երում հրդեհային ազդանշանային համակարգերի տեղադրում և հրդեհաշիջման համակարգերի կառուցում կամ վերակառուցում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 173,9 մլն դրամ: Հաշվետվության ուսումնասիրության համաձայն այս ուղղությամբ իրականացվել

են 15,4 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են «Տաթև», «Սպանդարյան», «Շամբ» ՀԷԿ-երի հրդեհային ազդանշանային համակարգի տեղադրման, «Սպանդարյան ՀԷԿ»-ի հրդեհային լողավազանի և ջրամատակարարման համակարգի կառուցման և «Տաթևի ՀԷԿ»-ի հրդեհաշիջման համակարգի վերանորոգման աշխատանքներին: Վերոհիշյալ աշխատանքները մնացել են անավարտ:

«Ջրամբարներում ձկնապաշտպան և մաքրող էկրանների նախագծման աշխատանքներ» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 10,0 մլն դրամ: Այս ուղղությամբ իրականացվել են 24,5 մլն դրամի նախագծման աշխատանքներ, որոնք մնացել են անավարտ:

«Տաթև ՀԷԿ-ում տրանսֆորմատորների միջև գոյություն ունեցող պատերի վերակառուցում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 14,3 մլն դրամ: Այս ուղղությամբ իրականացվել և ավարտին են հասցվել 9,9 մլն դրամ ներդրումներ, որոնք ուղղվել են հրդեհային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացմանը:

«Տրանսֆորմատորային ենթակայանների տեղակայում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 38,4 մլն դրամ: Հաշվետվության ուսումնասիրության համաձայն այս ուղղությամբ իրականացվել են 42,7 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ընկերության ջրամբարներում տեղակայված տրանսֆորմատորները փոխարինվել են չոր տրասֆորմատորներով: Նշված աշխատանքներն ավարտված են:

3.3 Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Ընկերության ՀԷԿ-երի հետագա անվտանգ և անխափան աշխատանքի ապահովման, ինչպես նաև ժամանակակից արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացման նպատակով 2018 թվականին համաձայնեցված էր 556,0 մլն դրամ՝ Գորիս քաղաքի գրասենյակի, դրան կից պահեստների և «Տաթև ՀԷԿ»-ի շենքի, և ՀԷԿ-երի պահեստների, «Սպանդարյան» ջրամբարի բարձրացնող մեխանիզմների հիմնանորոգման, «Սպանդարյան ՀԷԿ»-ում կամրջակային կռունկի ամրացման և գնդային փականի վերականգնման, ինչպես նաև գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերման նպատակով:

«Գորիսի գրասենյակի հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 24,8 մլն դրամ ներդրումներ, որով նախատեսված էր իրականացնել նախագծման և հիմնանորոգման աշխատանքներ Գորիս քաղաքի վարչական շենքի անվտանգության չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել են 22,7 մլն դրամ արժեքով ներդրումներ, որից 8,7 մլն դրամ ներդրումները ուղղվել են գրասենյակային գույքի ձեռքբերմանը և ավարտվել են, իսկ նախագծմանն ուղղված 14,2 մլն դրամը մնացել է անավարտ:

«Գորիսի գրասնեյակին կից պահեստների և ՀԷԿ-երի պահեստների հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 103,4 մլն դրամ ներդրումներ, որի իրականացման նպատակն էր Գորիս քաղաքի գրասենյակին կից պահեստների, ինչպես նաև «Շամբ» և «Սպանդարյան» կայանների յուղի և ապրանքների պահեստների հիմնանորոգումը: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել և ավարտվել են 102,3 մլն դրամ արժեքով ներդրումներ:

«Կամրջակային կռունկի ամրացում Սպանդարյան ՀԷԿ-ում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 9,0 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել և

ավարտվել են 8,0 մլն դրամ արժեքով ներդրումներ, որոնք ուղղված են կամրջակային կռունկի ամրացման աշխատանքներին և կապահովեն կռունկի սեյսմիկ կայունացումը:

«Տաթև ՀԷԿ-ի շենքի հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 73,1 մլն դրամ ներդրումներ, որով նախատեսված էր իրականացնել Տաթև ՀԷԿ-ի շենքի տանիքի փոխարինման աշխատանքներ՝ անվտանգության չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Այս ուղղությամբ իրականացվել և ավարտին են հասցվել 53,2 մլն դրամ ներդրումներ:

«Սպանդարյան ՀԷԿ-ի և Սպանդարյան ջրամբարի բարձրացնող մեխանիզմների հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 60,2 մլն դրամ ներդրումներ: Նշված ուղղությամբ փաստացի իրականացվել են 61,7 մլն դրամ ներդրումներ, որոնք ավարտվել են:

«Չափիչ սարքերի և գործիքներ ձեռքբերում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 25,8 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու տարում ձեռք են բերվել 9,7 մլն դրամ արժեքով տուրբինային յուղի մաքրման և անկերների ամրություն ստուգող սարքեր:

«Համակարգչային տեխնիկայի և օպերատիվ անձնակազմի համար բջջային հեռախոսների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 30,2 մլն դրամ՝ բջջային, IP հեռախոսների, մուլտիմեդիա սարքավորումների, համակարգիչների և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 26,5 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Գորիսի գրասենյակի և պահեստների գույքի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 27,0 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել 20,8 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ:

Մյուս ենթաուղղություններով ներդրումներ չեն իրականացվել:

3.4 Հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրում

Հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրման ուղղությամբ 2018 թվականին համաձայնեցված էր 200,9 մլն դրամ՝ ընկերության Սպանդարյան, Շամբ և Տաթև հիդրոէլեկտրակայաններում, որն ուղղված էր լրացուցիչ պաշտպանության ներդրմանը՝ դրանով իսկ ապահովելով աշխատանքի անվտանգությունն և շարունակականությունը: Նշված ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2018 թվականի ընթացքում Ընկերության կողմից փաստացի ավարտված 343,3 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. Հաշվետվության ուսումնասիրության արդյունքում 10,9 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու պատճառով,
2. Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված գնումների արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացվել է ընկերության կողմից ձեռքբերված ապրանքների գնային վերլուծություն: Գների մոնիթորինգի արդյունքում փաստվել է, որ ապրանքների գները

գերազանցում են շուկայականը: Մասնավորապես, շուկայական գների համեմատության արդյունքում 6,9 մլն դրամ նվազեցվել է գրասենյակային գույքի ձեռքբերման ենթաուղղությունից:

3. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 17,1 մլն դրամով, որը ևս նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից հետևյալ ենթաուղղություններով.
   - տրանսֆորմատորային ենթակայանների տեղակայում՝ 4,4 մլն դրամ,
   - համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 4,3 մլն դրամ,
   - չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերում՝ 2,0 մլն դրամ,
   - շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 6,4 մլն դրամ:
4. Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի օտարման (վաճառքի) արժեքը՝ 430,0 հազ. դրամ, իսկ լուծարված հիմնական միջոցների դեպքում լուծարման արդյունքում մուտքագրված նյութերի արժեքը՝ 643,1 հազ. դրամ, նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ Ընկերության կողմից 2018 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է ստորև՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3
մլն դրամ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի սակագնով փոխհատուցման ենթակա 2018 թվականի ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը

1	**Իրականացված ներդրումներ**	**835,1**
2	**Անավարտ աշխատանքներ**	**491,7**
3	**2018 թվականի ընթացքում շահագործման հանձնված աշխատանքներ**	**343,3**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**35,9**
4.1	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումներ	10,9
4.2	Ապրանքների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված նվազեցումներ	6,9
4.3	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումները գերազանցող ներդրումներ	17,1
4.4	Լուծարված հիմնական միջոցներ	0,6
4.5	Օտարված(վաճառված) հիմնական միջոցներ	0,4
5	**2018 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**307,4**

Եզրակացություններ

Ամփոփելով Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները նշենք, որ 2018 թվականի ներդրումային ծրագիրն իրականացվել է 20%-ով: Հաշվետու ժամանակահատվածում ավարտված ներդրումների ծավալը կազմել է 343,3 մլն դրամ:

Իրականացված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 307,4 մլն դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրությանն և շինարարական աշխատանքների գնահատմանն ուղղված ներդրումները չեն ավարտվել, իսկ շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավման և շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով նախատեսված ներդրումներն իրականացվել են մասնակի: Հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ պաշտպանության սարքերի տեղադրման ուղղությամբ ներդրումներ նույնպես չեն իրականացվել:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի №447Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».
Որոշում 2 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 8-ի №149Ա որոշումը «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».
Հաշվետվություն -	«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականին փաստացի կատարված կապիտալացվող և ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ ընկերության 2019 թվականի մայիսի 10-ի №0083-2019 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:
Տեղեկատվություն -	Տեղեկատվություն լուծարված հիմնական միջոցների մասին Տեղեկատվություն օտարված (վաճառված) հիմնական միջոցների մասին